թալի դարձան, քանզի և նոքա զտէֆտէրտարն դըրդեցին եղբարբ նորին թէ Զտեղացին մեր տանելոց եմ ի բնիկ գաւառն իւրեանց, որ բազում դրամից ելին քաղաքացիքս, որ զՍեաստացիք ևս ի խարաճ կապէր ուրոյն յեկեղեցիսն։ Վասն որոյ և յերկրէն Կամխայ ևս եկին որ Ցունիս ամսոյ ի բուն՝ արք անագորոյնք[1]) մտեալ առ վէզիրն, առեալ զիր հրամանի թէ Դուք աստ պարոնի պէս ապրիք և հարկ ոչ տայք երկրի ձերոյ, ելեալ երթիջիք[2]) ի բնիկ գաւառն ձեր։ Եւ աստ լեալքն աղաչէին ոմանք և աղերսէին, այլք պատուէին և կէսք դրամ տային նոցա և ոչ զիջանէին, և բազումք կային ի փախուստ և ոչ նստէին ի բան եւ ի գործ եւ ի խանութ՝ զբազում աւուրս, եւ շրջէին չաւուշովք, որոնէին յամենայն անկիւնս քաղաքիս զի կալեալ տարցեն զո՛ ոք և գտցեն։ Եւ զաղքատս ոչ մօտէին այլ զմեծամեծս և զխոհականս, և կնքէին զդրունս տանց բազմաց, և ոչ ինչ էր փոյթ տանելն նոցա, այլ թէ ամի ամի հարկս տացեն։ Վասն որոյ մերայինքս ոչ կամէին զայս չար օրէն ի մերում ժամանակի ստանալ և կային ի փախուստ և ոչ կային միաբան. բայց ոմանք ի խորհրդոց մերոց հոգային ձեռամբ զատուն մեծի որ ծանօթ էր մեզ յոյժ, որպէս ի վերոյ ասացեալ եմք, և գատաստան ոչ լինել հրամայէր այս և ընդդիմանայր։ Եւ մինչդեռ վէզիրն յՈւսկիւտարն՝ անդ քարշէին զո՛ ոք եւ գտանէին, եւ նա իւրով հրամանաւ աստ առաքէր եւ զատին ոչ տեսանէր իրաւունս ընդ փաշային Իսմայիլայ։ Եւ օտարքն յամենայն աւուր բանակ բանակ եղեալ ի մէջ քաղաքիս, որքան կար էր իւրեանց՝ երթային եւ գային յՈւսկիւտարն, մինչև զայրանալ վէզիրին, զերեք այր հայ ի քաղաքացոց Գ տարով. յետ գնալոյ վէզիրին

1) անագորոնք. 2) երթիցուք.